ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	*Ակունք բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում*	*Ֆուտբոլը Ակունք բնակավայրի բնակիչների շրջանակում ամենապահնջված սպորտաձևն է: Համայնքի տնտեսության և հասարակության զարգացման հոգևոր և մշակութային նպատակների արդիականացման շնորհիվ ավելի հարմարավետ միջավայրում կարող է կազմակերպվել բնակիչների ազատ ժամանցը, խթանել ֆուտբոլի և սպորտի զարգացմանը:* *Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ*	• *Ընդունվել է*	
2.	*Ակունք բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում*	*Ֆուտբոլի դաշտի կառուցումը կխթանի բնակավայրում առողջ ապրելակերպի, սպորտի հետաքրքրվածությունը, որով հնարավոր կլինի նաև բնակավայրում կազմակերպել սպորտային միջոցառումներ, որը կնպաստի նաև երիտասարդների և դպրոցականների ակտիվությանը:* *Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ*	• *Մերժվել է*	*Ծրագիրը կրկնվում է: Ընտրվել է սկզբնական ներկայացված ծրագիրը:*
3.	*Արկածային տուրիզմի զարգացում Կարմրաշեն բնակավայրում*	*Թալին համայնքի Կարմրաշեն բնակավայրի հարակից ծորակում ստեղծել ժայռամագլցման հատված՝ հաշվի առնելով արշավային խմբերի այցելությունների*	• *Մերժվել է*	*Չի համապատասխանում չափանիշներին ըստ ավագանու 16 դեկտեմբերի 2025 թվականի N 193-Ա որոշման:*

[1] Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

		աճը և ժայռամագլցման նկատմամբ հետաքրքրությունը: Ծրագիրը կզարգացնի համայնքի արկածային և էկոտուրիզմը, սակայն ներկայումս սահմանափակվում է անհրաժեշտ անվտանգության պարագաների բացակայության պատճառով: Խնդրում ենք համայնքի աջակցությունը՝ մեկանգամյա ֆինանսավորմամբ (515,000–763,000 դրամ)՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար:		
4.	Հանգստի և ժամանցի վայրի կառուցում Գառնահովիտ բնակավայրում	Ծրագրով նախատեսվում է Գառնահովիտի վարչական շենքին հարակից 250 ք/մ տարածքում կառուցել ժամանակակից փոքր խաղահրապարակ՝ կանաչ գոտիներով, 3–4 խաղասարքով, նստարաններով, աղբամաններով, ինչպես նաև իրականացնել տարածքի բարեկարգում և ցանկապատում: Հրապարակը կծառայի որպես երեխաների և ընտանիքների ամենօրյա հանգստի վայր՝ խթանելով համայնքային կյանքը և բարելավելով բնակավայրի սոցիալական միջավայրը: Բյուջե՝ մոտ 2 500 000 ՀՀ դրամ	• Ընդունվել է	
5.	Թալինի մարզադաշտի բարեկարգում	Բարեկարգել քաղաքային ֆուտբոլի դաշտի խոտածածկույթը և կառուցել տրիբունա՝ իր նստարաններով և տանիքով, բարեկարգել վազքուղին նաև հարակից տարածքները:	• Ընդունվել է	

		Բյուջե՝ մոտ 35 մլն ՀՀ դրամ		
6.	Կաթնաղբյուր բնակավայրի փողոցային լուսավորության անցկացում	Ծրագրի նպատակն է Կաթնաղբյուր բնակավայրում իրականացնել 5180 մետր երկարությամբ ժամանակակից, էներգախնայող փողոցային լուսավորության համակարգ՝ ներառյալ դպրոց տանող ճանապարհը: Լուսավորության ապահովումը կբարձրացնի բնակիչների, հատկապես երեխաների անվտանգությունը մթության ժամերին և կնպաստի բնակավայրի կենսամակարդակի ու հասարակական անվտանգության բարելավմանը: Բյուջե՝ մոտ 26 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
7.	Լուսակն բնակավայրի հանդիսություններ ի սրահի վերանորոգում	Ծրագրի նպատակն է վերանորոգել և ներքին հարդարել Լուսակն բնակավայրի 163 քմ հանդիսությունների սրահը՝ ապահովելով անհրաժեշտ գույք, լուսավորություն և ջեռուցում: Սրահի բարելավումը կստեղծի անվտանգ ու ժամանակակից միջավայր համայնքային միջոցառումների համար և կնպաստի բնակավայրի մշակութային ու հասարակական կյանքի ակտիվացմանը: Բյուջե՝ մոտ 25 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
8.	Վերին Բազմաբերդ բնակավայրի մեծ ֆուտբոլի դաշտի ցանկապատում, հարթեցում և բարեկարգում	Ծրագրի նպատակն է բարեկարգել Վերին Բազմաբերդ բնակավայրի մեծ ֆուտբոլի դաշտը՝ հարթեցնելով խաղային մակերեսը և տեղադրելով անվտանգ ցանկապատ: Դաշտի բարելավումը կբարձրացնի մարզվող	• Ընդունվել է	

		երեխաների և երիտասարդների անվտանգությունը, կխթանի ֆիզիկական ակտիվությունն ու կապահովի դաշտի երկարաժամկետ օգտագործումը համայնքի համար: *Բյուջե՝ մոտ 25 մլն ՀՀ դրամ*		
9.	*Շղարշիկ բնակավայրի կանաչ ապագան*	*Ծրագրով առաջարկվում է Շղարշիկ բնակավայրում կառուցել նոր զբոսայգի՝ հանրային և հանգստի տարածք ստեղծելու նպատակով: Այն կներառի տարածքի պարսպապատում, զինվորական հուշարձանի ցանկապատում, քայլարշավային արահետներ, կանաչապատում, էներգախնայող լուսավորություն, նստարաններ, աղբամաններ և խմելու ջրի պուլպուլակներ՝ ապահով, մաքուր և մատչելի միջավայր ստեղծելու համար:* *Բյուջե՝ մոտ 25 մլն ՀՀ դրամ*	• *Ընդունվել է*	
10.	*Արագածավան բնակավայրի մշակույթի տան դահլիճի վերանորոգում*	*Ծրագրի նպատակն է վերանորոգել Արագածավան բնակավայրի Մշակույթի տան մեծ դահլիճը, որը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում: Վերանորոգման արդյունքում կստեղծվի անվտանգ, ջերմ և ժամանակակից միջավայր մշակութային միջոցառումների, համերգների և համայնքային հավաքների համար՝ նպաստելով գյուղի մշակութային կյանքի վերակենդանացմանը և սոցիալական ակտիվության բարձրացմանը:*	• *Ընդունվել է*	

		Բյուջե՝ մոտ 45 000 000 ՀՀ դրամ:		
11.	Եղնիկ բնակավայրի ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտերի կառուցում	Ծրագրի նպատակն է Եղնիկ բնակավայրում կառուցել մինի ֆուտբոլի և վոլեյբոլի անվտանգ ու ստանդարտ սպորտային դաշտեր՝ երեխաների և պատանիների համար: Դաշտերի առկայությունը կբարձրացնի ֆիզիկական ակտիվությունը, կնվազեցնի վտանգավոր պայմաններում խաղալու ռիսկերը և կնպաստի համայնքի սոցիալական կյանքի ու երիտասարդական ներգրավվածության զարգացմանը: Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
12.	Կարմրաշեն բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում	Ծրագրով նախատեսվում է Կարմրաշեն բնակավայրում կառուցել ֆուտբոլի համար նախատեսված խաղահրապարակ՝ համայնքային 02-059-0014-0003 ծածկագրով հասարակական նշանակության հողակտորի վրա: Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
13.	Դաշտադեմ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում	Ծրագրով առաջարկվում է Դաշտադեմ բնակավայրի կենտրոնում՝ նախկին «Ուսուցչի տան» հարակից տարածքում, կառուցել մինի ֆուտբոլի դաշտ: Այն կծառայի երեխաների և երիտասարդների ֆիզիկական ակտիվության, ժամանցի և սպորտային կյանքի զարգացմանը, ինչպես նաև կդառնա համայնքային միջոցառումների անցկացման վայր: Դաշտի հարակից տարածքում նախատեսվում է ծառատունկ՝ ստեղծելով	• Ընդունվել է	

		բնակավայրի համար գողտրիկ հանգստի գոտի: Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ		
14.	Իրինդ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում	«Արի Թալին» ՀԿ-ն առաջարկում է Թալին համայնքի Իրինդ բնակավայրում, Մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակում, կառուցել մինի ֆուտբոլի դաշտ՝ երիտասարդների ակտիվ և առողջ ժամանցը խթանելու, սպորտային կյանքի զարգացման և համայնքային համախմբվածության ամրապնդման նպատակով: Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
15.	Դավթաշեն բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում	Ծրագրի նպատակն է ստեղծել ժամանակակից և բարեկարգ հանգստի գոտի՝ կանաչապատ պուրակով, մինի ֆուտբոլի դաշտով և անվտանգ խաղահրապարակով, որը կբարելավի համայնքի գեղագիտական տեսքը, կխթանի երեխաների ակտիվ ժամանցը և բնակիչների սոցիալական շփումը: Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	
16.	Սուսեր բնակավայրում մշակույթի տան վերանորոգում	Ծրագրի նպատակն է վերանորոգել և արդիականացնել Սուսեր բնակավայրի մշակույթի տունը՝ վերածելով այն ժամանակակից, ակտիվ մշակութային կենտրոնի երեխաների, երիտասարդների և ողջ համայնքի համար՝ նպաստելով մշակութային կյանքի վերակենդանացմանը և ազգային արժեքների պահպանմանը: Բյուջե՝ մոտ 50 մլն ՀՀ դրամ	• Ընդունվել է	

17.	*Պարտիզակ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում*	*Ծրագրով նախատեսվում է Պարտիզակ բնակավայրում կառուցել մինի ֆուտբոլի դաշտ:* *Բյուջե՝ մոտ 30 մլն ՀՀ դրամ*	• *Ընդունվել է*	